Հայ պատմագրություն
5-րդ դարի պատմիչներ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

Մեզ հայտնի երկրորդ պատմիչն է: Ագաթանգեղոսից հետո նույնպես գրել է «Հայոց պատմություն» խորագրով հայտնի պատմագրական երկ:

Փավստոսի մասին չկա ոչ մի կենսագրական տեղեկություն: Բուզանդ անունը, հավանաբար, ծածկանուն է. նշանակում է զրուցաբան, զրույցների մեկնիչ: Եվ, իսկապես, այս երկը գրեթե ամբողջովին շարադրված է բանավոր զրույցների, հատկապես «Պարսից պատերազմ» ավանդավեպի հիման վրա: Այդ զրույցները մատուցված են քրիստոնեական գաղափարներ քարոզող խրատներով ու հրաշապատումներով:

Փավստոսի «Հայոց պատմությունը», ժամանակագրական առումով, Ագաթանգեղոսի գրքի շարունակությունն է. ընդգրկում է 310-ական թվականներից մինչև Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387):

Երկը շարադրելով բանավոր պատմությունների հիման վրա, հեղինակը դրանք չի ներկայացրել ստույգ ժամանակագրությամբ: Միահյուսելով ժամանակի հայ արքաների, նախարարների ու հոգևոր առաջնորդների մասին եղած զրույցները, նա ստեղծել է 4-րդ դարի Հայաստանի ռազմական-քաղաքական ամբողջական ու կենդանի պատկերը: Դրանում որոշ չափով արտացոլված են նաև երկրի ներքին կյանքը, ժողովրդի կենցաղն ու հավատալիքները:

Բուզանդի Պատմության մեջ պատկերված են ժամանակի արտաքին և ներքին ուժերի բախումները: Արտաքին բախումը կատարվում է Հայաստանի և Պարսկաստանի, ներքին բախումը՝ հայոց արքունիքի, հոգևոր առաջնորդների ու նախարարների միջև: Այդպիսով՝ այս երկը չափազանց հարուստ է գործողություններով, որոնք հեղինակը նկարագրում է ճկուն ու գունագեղ լեզվով, աշխույժ ոճով, կենդանի երկխոսություններով՝ հետևելով ժողովրդական զրույցներին:

Հետաքրքիր է հատկապես «Պարսից պատերազմ»-ից քաղված այն դրվագը, որ ներկայացնում է պարսից Շապուհ արքայի հանդիպումն ու զրույցը նենգորեն իր պալատ բերած Հայոց թագավոր Արշակի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի հետ: Ստուգելու համար Հայոց թագավորի հավատարմությունը՝ Շապուհը դիմում է խորամանկության: Նա հրամայում է իր սենյակի հատակի մի մասի վրա Հայաստանից բերված հող շաղ տալ, իսկ մյուս մասի վրա թողնել պարսկական հողը: Այնուհետև Արշակի հետ ճեմում է այդ սենյակում և շարունակ հարց է տալիս նրան, թե ինչո՞ւ է թշնամացել իր հետ: Պարսկական հողի վրա Արշակը զղջում է իր թշնամանքի համար և հայտնում իր հնազանդությունը: Մինչդեռ կանգնելով հայրենի հողի վրա, որ ուժ ու արիություն է պարգևում, Հայոց արքան ըմբոստանում է և խոսքը փոխելով՝ համարձակորեն պախարակում բռնակալին: Շապուհը շղթայում ու բանտարկում է նրան Անհուշ բերդում: Ապա հրամայում է իր մոտ բերել Վասակ Մամիկոնյանին: Երբ պարսից արքան վերջինիս սպառնալով ու պարսավելով՝ կոչում է աղվես, բազում հաղթական մարտեր վարած Հայոց սպարապետն այսպիսի արժանապատիվ պատասխան է տալիս. «Մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս: Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մեկ այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»:

Շապուհի այն հարցին, թե որո՞նք էին այդ լեռները, Վասակ Մամիկոնյանը

համարձակ պատասխանում է. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը»:

Փավստոսի Պատմության մեջ, Վասակի հետ միասին, անձնազոհ հերոսների փայլուն շարք են կազմում մյուս սպարապետները՝ Վաչե, Մուշեղ և Մանուել Մամիկոնյանները: Նրանց բոլորին հատուկ է դյուցազնականությունը, անշահախնդիր նվիրումը հայրենիքին ու թագավորին:

Վասակի որդի Մուշեղը վեհանձնության մի անմոռանալի դաս է տալիս իր հորը մորթազերծ արած Շապուհին՝ ետ վերադարձնելով վերջինիս գերված կանանոցը: Դավադրության զոհ գնալով՝ Հայոց քաջ սպարապետն ասում է. «Այս մահը երանի՜ թե ձիու վրա ինձ հասներ»: Նույն ձևով, անկողնում մեռնող ծերունի Մանուել Մամիկոնյանն ասում է. «Որքա՜ն լավ կլիներ, եթե պատերազմի մեջ մեռնեի՝ երկրի համար»:

Իրենց խիզախությամբ այս քաջարի սպարապետները նման են հեթանոսական դյուցազուններին, միայն այն տարբերությամբ, որ, հայրենիքից բացի, նրանք անձնվիրաբար ծառայում են նաև քրիստոնեական հավատին. նրանք քրիստոնյա ասպետներ են:

Հերոսական կերպարներին հակադիր են անհնազանդ ու դավաճան հայ իշխանները: Նրանց մեջ առանձնանում է հատկապես Մերուժան Արծրունին, որ մեր ժողովրդի համար դարձել է անարգ դավաճանի հասարակ անուն: Խիստ բացասական գծերով են օժտված նաև Հայոց աշխարհի թշնամի օտար տիրակալները, մասնավորապես Շապուհը, որը նենգ ու խորամանկ բռնապետի տիպար է:

Առանձին կերպարաշար են կազմում հայ թագավորները: Նրանց մեջ պատմագրի համար ընդունելի է Խոսրով Կոտակի նման արքան, որը հաշտ ու խաղաղ համագործակցում է հոգևոր տիրոջ ու սպարապետի հետ: Մինչդեռ Վարազդատը, թեև արիասիրտ է, բայց մանկամիտ է և, առանց քննելու չարամիտ մարդկանց խորհուրդները, սպանում է երկրի պաշտպան Մուշեղ Մամիկոնյանին: Ինչպես Արշակ թագավորը, այնպես էլ Փառանձեմ թագուհին, օժտված են և՛ դրական, և՛ բացասական գծերով՝ իրենց կատարած գործերի համաձայն...

Մեծ մասամբ դրական անձինք են պատմիչի պատկերած հոգևորականները: Նրանց մեջ առանձնանում է Ներսես Մեծ կաթողիկոսը: Երբեմնի զորեղ ռազմիկը դարձել էր հայոց հոգևոր հովիվ և իր բարի գործերով ծաղկեցնում էր Հայաստանը: Ներսեսը պետական բարձր մտածողության կրող է. նա թեև գժտվում է Արշակ թագավորի հետ, բայց իշխաններին կոչ է անում հավատարիմ մնալ իրենց օրինական տիրոջը:

Բուզանդի Պատմության մեջ կան նաև մի քանի բացասական հոգևորականների կերպարներ: Սա նորություն էր հայ մատենագրության մեջ: Պատմիչն ատելությամբ և որոշ երգիծանքով է պատկերել հատկապես Հոհան եպիսկոպոսին՝ մեջբերելով նրա արատները մերկացնող զրույցներ...

Քարոզելով ու փառաբանելով հանդերձ քրիստոնեական կրոնն ու բարոյականությունը՝ Փավստոս Բուզանդը միաժամանակ արտահայտել է նաև ազատասիրական և հայրենասիրական հույզեր ու խոհեր: Նա պաշտպանել է Հայոց տերերի միաբանության գաղափարը՝ նկատելով, որ Հայաստանը ծաղկում է միայն այն ժամանակ, երբ միաբան են թագավորը, կաթողիկոսը, սպարապետը և մյուս նախարարները:

Պատմագիրը միշտ ջերմորեն պաշտպանել է կենտրոնացված օրինական պետականության գաղափարը: Նա ձգտել է ցույց տալ, որ մարդուն, հատկապես երկրի առաջնորդին, ուժ և զորություն է պարգևում հայրենի հողը: Սրանով Բուզանդը բարձրացրել է հայրենիքի գաղափարը, աստվածասիրությունից բացի հայրենասիրության կոչ արել: Այդ էր պահանջում տվյալ ժամանակը, երբ հայ ժողովուրդը պայքարում էր հանուն իր ազատ և անկախ պետականության...

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Փավստոս Բուզանդի կյանքը և ապրած ժամանակաշրջանը:
2. Ժամանակագրական առումով Բուզանդի «Հայոց պատմությունը» պատմական ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում:
3. Հատկապես ո՞ր ավանդավեպի հիման վրա է կառուցել Բուզանդն իր «Հայոց պատմություն» երկի զրույցները: Մեկնաբանեք՝ ինչ դեր ունեն քրիստոնեական գաղափարներ քարոզող խրատներն ու հրաշապատումներն այս երկում:
4. Թվարկեք Մամիկոնյան տոհմի անձնազոհ հերոսներին ու ներկայացրեք յուրաքանչյուրի արարքները՝ ելնելով երկից:
5. Մեկնաբանեք այս միտքը և արտահայտեք ձեր դիրքորոշումը. «Մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս: Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մեկ այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»:
6. Հայրենիքին ու թագավորին անշահախնդիր նվիրված հերոսական կերպարներին հակադրեք անհնազանդ ու դավաճան հայ իշխաններին:
7. Վենի գծակարգով ներկայացրեք Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» նմանությունները, տարբերություններն ու ընդհանրությունները:
8. Թվարկեք Բուզանդի Պատմության բացասական հոգևորականներին և վերլուծեք կերպարները: Մեկնաբանեք նրանց արարքների դրդապատճառները՝ ապահովելով պաճառահետևանքային կապը:

9. Ներկայացրեք Հայոց աշխարհի թշնամի օտար տիրակալներին, մասնավորապես՝ Շապուհին: Հակադրեք Արշակին:
10. Թվարկեք երկում առկա հայ թագավորներին: Գնահատեք նրանց գործունեությունը:
11. Գնահատեք Արշակ թագավորին և Փառանձեմ թագուհուն՝ իրենց կատարած գործերի համաձայն: Մեկնաբանեք՝ ինչպիսի գծերով են օժտված նրանք:
12. Գնահատեք պատմիչի պատկերած հոգևորականներից Ներսես Մեծ կաթողիկոսին: Բնութագրեք նրան՝ համեմատելով երկի ձեր նախընտրած կերպարի հետ:
13. Որո՞նք են Բուզանդի Պատմության հիմնական գաղափարները: Ասածդ հիմնավորիր՝ բնագրից բերելով համապատասխան օրինակներ (անհատական աշխատանք):

Կարծիքներ Բուզանդի Պատմության ծավալի, լեզվի, գրության ժամանակի և հեղինակի ազգության մասին

https://hy.wikisource.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81_(%D5%93%D5%A1%D5%BE%D5%BD%D5%BF%D5%B8%D5%BD_%D4%B2%D5%B8%D6%82%D5%A6%D5%A1%D5%B6%D5%A4)/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6